կան 'ի կարողութենէ, մինչեւ լինել նոցա հոգիս ապատան։

Իսկ Վէզիրն մեծ Բեհռ Եուսուֆ Փաշա հասեալ 'ի կողմանս Յոպպէացւոց, բանակեցաւ 'ի դաշտի անդ՝ և հանգիստ ետ զօրաց իւրոց զաւուրս 20 · եւ ապա ելլ և գնաց զկնի Գազղիացւոց, և պատահեալ միմեանց ետուն ճակատ սաստիկ · պարտեցաւ բանակն Օսմանեան, և անկան բազում մեռեալք և վիրաւորք 'ի դաշտի անդ · և ինքն Վէզիրն մնացեալ զօրօք իւրովք փախուցեալ անկաւ 'ի քաղաքն Յոպպէ, թողեալ յաւար թշնամեաց զկազմածս, զզէնս, զկարասիս և զդանձս բանակին։

Եւ զի յառաջագոյն որդի Բդեշխին Ադոնա Մէրոֆ կոչեցելոյ, եկեալ յԵրուսաղէմ արկեալ էր տուգանս 'ի վերայ վանօրէից · եւ 'ի սմին աւուրս (12 Ապրիլ) վերստին ելանդ և նեղութեամբ վշտացոյց զվանականս տուժիւք եւ ականօք՝ կողոպտելով զնոսա դարձաւ 'ի բանակն։ Եկեալ էր ընդ մեծի Վէզիրին և սեղանաւոր Ակնցի Զօփենց մահտեսի Անտոն Ամիրայն · 'ի սմանէ կանխաւ խնդրեալ էր Պետրոս Պատրիարք՝ լինել միջնորդ առ որդի Բդեշխին, զի մի խսպառ նկուն արասցէ զՀայս · այլ նա բնաւ ունկն ոչ մատոյց բանից Անտոնի · թէպէտեւ զերծան առ ժամն 'ի ձեռաց նորա, այլ կասկած մեծ էր 'ի դառնալ նորա յետս · և նոցա պատահիլ նորանոր տառապանաց, պակասեցան կարեւոր սէտք վանաց, և դժուարութեամբ հայթայթէին զաւուրն պարէն, որոյ վասն աւաղէ Պետրոս Պատրիարք զթշուառութիւն իւրոյ ժամանակին, և բիւրեցս երանի ասէ մեռելոց որք 'ի Տէր ննջեցին։

Ի մեռանիլ տիրացու Սարգսի 'ի Կոստանդինուպոլիս, զոր իբր գործակատար Երուսաղէմի կարգեալ էր զնա Յովակիմ Պատրիարքի, որպէս գրեցաք, եւ նա հաւատարմութեամբ վարեաց զայն պաշտօն · իսկ զկնի մահուան նորա Պետրոս Պատրիարք 'ի տեղի նորա առաքեաց փոխանորդ Երուսաղէմի զԹէքիրտաղցի Յակոբ եպիսկոպոս։

Եւ 'ի սոյն դառն ժամանակիս էառ նա ինքն Պետրոս զպատասխանիս նամակացն, զոր գրեաց ինքն և նախորդ իւր Յովակիմ առ Կայսրուհին Ռուսաց, և առ Յովսէփ եպիսկոպոս առաջնորդ կողմանցն այնոցիկ · ընդ նոսին եւ